Արձանագրություն N 2
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/8» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան

18.12.2019թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Գևորգյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Թ. Բերբերյան /գնահատող/, Տ. Պետրոսյան /գնահատող/, Ք. Մարտիրոսյան /բացող/, Ա. Երմազյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Եղիազարյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/8» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման և գնահատման մասին

(Գ. Գևորգյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի **դեկտեմբերի 18-ին, ժամը 11:00-ին**, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտիի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ - 0:

2. «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/8» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Գ. Գևորգյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը
1	Կարապետ Սահակյան Ա/Ձ

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ - 0:

3.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Գ. Գևորգյան)

3.1 Գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

ՀՀ	Գնման առարկայի անվանումը	Մասնակիցներ			
		Կարապետ Սահակյան Ա/Ձ			
		Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ չի վճարում	Ընդհանուր գին
1	փոշեկուլ	43200	4800	-	48000

3.2 Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ - 0:

4. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին**

(Գ. Գևորգյան)

4.1 Գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ: Այն է՝ Կարապետ Սահակյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված **հավելված 1.1-ում.**

1. Ֆիրմային անվանումը սյունակում նշված է Կարապետ Սահակյան Ա/Ձ,
2. Ապրանքային նշանը սյունակում նշված է Panasonic կամ համարժեք, իսկ առաջարկվող ապրանքը հարկավոր է ներկայացնել առանց համարժեքության,
3. Ապրանքի մակնիշը նշված չէ
4. Արտադրողի անվանումը նշված չէ
5. Տեխնիկական բնութագիր սյունակներում նշված է Panasonic կամ համարժեք, ինչը ևս հարկավոր է ներկայացնել առանց համարժեքության:

Վերոգրյալը չի համապատասխանում հրավերի առաջին մասի 4.3 կետի 2-րդ ենթակետի պահանջներին, որով սահմանվում է, որ մասնակիցը ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր) առանց համարժեքության:

4.2 Ելնելով վերոգրյալից գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և ծանուցել Կարապետ Սահակյան Ա/Ձ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու դեպքում մասնակցի հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Գ. Գևորգյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել փաստաթղթերի ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 09:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Գ. Գևորգյան

Անդամներ՝ ---------- Թ. Բերբերյան

---------- Տ. Պետրոսյան

---------- Ք. Մարտիրոսյան

---------- Ա. Երմազյան

Քարտուղար՝ ---------- Ս. Եղիազարյան